Վիզուալ Հայաստան
զարգացման հիմնադրամ

«Վերափոխման պատմություն»

Արդիականացնելով կրթությունը դպրոցից դպրոց, ուսուցչից ուսուցիչ, աշակերտից աշակերտ

997	147	2.500	90.000+
«Բրեյնոգրաֆի» դպրոց	սմարթ-էկրանով վինված դպրոց	վերապատրաստված ուսուցիչ	«Աշխարհացույցի» շահառու աշակերտ

Յուրաքանչյուր խորքային վերափոխում սկսվում է իր ակունքից: «Վիզուալ Հայաստանի» համար այդ ակունքը **«Բրեյնոգրաֆ» նորարարական տեխնոլոգիան** էր՝ ստեղծված վերաիմաստավորելու Հայաստանի հանրակրթական դպրոցներում գիտելիք փոխանցելու ձևը: «Բրեյնոգրաֆը» ժամանակը, տարածությունն ու իրադարձությունները միահյուսող բովանդակության մատուցման հարթակ է, որտեղ «կենդանանում» են հանրակրթական առարկաները: Այն ներդրվեց 2021 թ. աշնանը և այդ ընթացքում դարձավ հայկական դպրոցներում ընդունված ամենանշանակալի նորարարությունը:

Սակայն, «Բրեյնոգրաֆի» ներդնումը միանգամից վերհանեց համակարգային խնդիրներ՝ ուսուցիչների ցածր թվային ու դասավանդման հմտություններ, ուսումնաօժանդակ տեխնիկայի բացակայություն և այլն: Ծրագրի վաղ փուլում այս խնդիրները հասցեագրելու մեր ջանքերն աստիճանաբար վերածվեցին ամբողջական լուծումների՝ հանգեցնելով **«Աշխարհացույց» նորարարական կրթական ծրագրի** ստեղծմանը:

«Աշխարհացույցի» երեք հիմնասյուները

Նորարարական կրթական ռեսուրսներ

Դպրոցական ծրագրի կարիքները բավարարող կրթական հոդվածներ, քարտեզներ, մեդիանյութ, որոնք ստեղծում են լավագույն մասնագետները՝ ապահովելով դեռևս հանրակրթական ինն առարկայի դասավանդման վերափոխում:

Ուսուցիչների հզորացում

Հավաստագրված մասնագիտական զարգացում,մենթորություն և աշխատարաններ, որոնք ուսուցիչներին վինում են արդի հմտություններով, ուսումնաօժանդակ գործիքներով և վստահությամբ:

Դպրոցների տեխնիկական վերավինում

«Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին» ծրագիր, որը դպրոցներին հնարավորություն է տալիս նախագծային աշխատանք կատարելու միջոցով վաստակել ժամանակի լավագույն կրթական տեխնիկա:

«Որպես բարերար՝ ինձ համար չի կարող լինել ավելի մեծ պարգև, քան Հայաստանի դպրոցներում տեսնել իրական, չափելի փոփոխություն: Ես անձամբ եմ ականատես եղել «Աշխարհացույցի» ազդեցությանը, որը գերազանցել է իմ սպասումները»:

Քրիստին Սիմոն, «Մանուկյան Սիմոն» հիմնադրամի նախագահ,
«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի աջակից

Երաշխավորված պետության կողմից

- «Բրեյնոգրաֆ» հարթակը ճանաչվել է ուսումնաօժանդակ ինտերակտիվ գործիք, 2022 թ.
- Հիմնադրամը երաշխավորվել է որպես ուսուցիչների պարտադիր վերապատրաստում իրականացնող կառույց, 2024 թ.
- «Աշխարհացույցն ուսուցչի սեղանին» ձեռնարկը երաշխավորվել է որպես ուսումնամեթոդական ձեռնարկ, 2024 թ.
- «Վիզուալ Հայասատան» հիմնադրամի «Նախագծային կրթության մոդուլը» դարձել է առաջին հավաստագրված ծրագիրը, 2025 թ.
- Հիմնադրամի հեղինակային «Սինթեզ» ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիրը երաշխավորվել է որպես ոչ ֆորմալ կրթական ծրագիր, 2025 թ.

Մեր առաջիկա նպատակները

- ՀՀ հանրակրթական ծրագրի բոլոր առարկաներն ինտեգրել «Բրեյնոգրաֆ» հարթակում
- Մասնագիտական վերապատրաստումներ իրականացնել 5.000+ հայ ուսուցչի համար և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում
- ՀՀ 1.399 դպրոցից յուրաքանչյուրը վինել առնվազն մեկ սմարթ-էկրանով
- Հայաստանում հիմնել Նորարարական կրթության գերազանցության կենտրոն

Դարձե՛ք մասնակիցն իրական վերափոխման

- **Զինե՛ք հայ սովորողին կրթական ռեսուրսներով.** 1.500.000 դրամը մեկ հնարավորություն կտա ստեղծել «Աշխարհացույցի» մեկ դաս՝ 20+ գիտափաստարկ կրթական հոդվածներով, քարտեզներով, նկարներով, տեսա և աուդիո նյութերով, քուիզներով, որը Երևանից մինչև սահմանամերձ գյուղեր սովորողներին կապահովի բարձրորակ ու գրավիչ կրթական բովանդակությամբ:
- **Զինե՛ք մեկ դպրոց մեկ սմարթ-էկրանով.** 1.000.000 դրամը մեկ հնարավորություն կտա ևս մեկ ՀՀ դպրոց վինել մեկ սմարթ-էկրանով, որը միանգամից վերափոխում է թե՛ դասավանդման որակը, թե՛ դպրոցի պատկերացումներն արդի կրթության մասին:
- **Զինե՛ք ուսուցչին.** 500.000 դրամը մեկ հնարավորություն կտա մեկ եռամսյա վերապատրաստում իրականացնել 30+ ուսուցիչների համար՝ նրանց վինելով ժամանակակից դասավանդման հմտություններով, գործիքներով և վստահությամբ:
- **Աջակցե՛ք ՀՀ դպրոցի արդիականացման մեր առաքելությանը.** Ցանկացած ներդրում «Աշխարհացույցի» երեք հիմնասյուներում ուղղակի աջակցություն է ՀՀ դպրոցների համակարգային վերափոխմանը:

Պատրա՞ստ եք աջակցել ՀՀ դպրոցների հզորացման գործին:

Գրե՛ք մեզ կամ զանգահարե՛ք donation@visualarmenia.org +374 41 500 608

Ծանոթացե՛ք «Վիզուալ Հայաստանի» 2021-2024 թթ. հաշվետվությանը

Նվիրաբերե՛ք այստեղ

Հետևե՛ք մեզ Facebook-ում

Նորարարական կրթական ռեսուրսներ

«Աշխարհացույցի» կրթական բովանդակությունը՝ թվային շտեմարան Հայաստանի դպրոցների համար

«Աշխարհացույցի» կրթական բովանդակությունը, որը ներկայացված է «Բրեյնոգրաֆ» հարթակում, ՀՀ հանրակրթական ծրագրի բոլոր պահանջները գերազանցող առաջին և միակ թվային շտեմարանն է:

«Աշխարհացույցի» բովանդակության յուրաքանչյուր կրթական հոդված, քարտեզ, մեդիանյութ ստեղծվում է գիտաշխատողների, հետազոտողների, մեթոդաբանների, խմբագիրների, սրբագիրների, իսկ որոշ դեպքերում՝ կրթամշակութային ինստիտուտների (թանգարաններ, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ և այլն) ներգրավմամբ: Այս գործընթացը թույլ է տալիս ապահովել բարձրորակ, հեղինակային, գիտափաստարկ, դինամիկ հայերեն նյութեր՝ հատուկ մշակված այսօրվա սովորողին հետաքրքրելու ու ներգրավելու համար:

Բովանդակության մշակման մեր համակողմանի մոտեցումը ներառում է՝

- հեղինակային կրթական նյութերի ստեղծում
- թվային արդի քարտեզագրություն
- մեդիանյութերի հավաքագրում (նկարներ, տեսա և աուդիո նյութեր)
- գիտելիքի ստուգման և ամրապնդման գործիքների մշակում (քուիզներ, խաչբառեր)
- տեխնոլոգիահեն գործիքներ՝ անհատականացված ուսուցման համար

Եվ ամենակարևորը...

«Աշխարհացույցը» թռիչք է կատարում դեպի բոլորին հավասար կրթական հնարավորություններ՝ Հայաստանի բոլոր մարզերի ամենահեռավոր գյուղերի ամենափոքր դպրոցների ուսուցիչներին վինելով իմաստալից դաս մատուցելու համար նորարարական տեխնոլոգիայով, որակյալ բովանդակությամբ, անվճար հեռավար վերապատրաստումներով ու սմարթ-էկրան վաստակելու հավասար հնարավորությամբ:

«Աշխարհացույցի» բովանդակությունը թվերով

9	4–12-րդ	505	5.592
հանրակրթական առարկա	դասարաններ	դաս	հոդված

«Աշխարհացույցով» դասավանդում են

997	2.500+	90.000+
դպրոցներում	վերապատրաստված ուսուցիչ	աշակերտի

Մեր նպատակն է առաջիկա 3-5 տարիների ընթացքում «Աշխարհացույցի» կրթական բովանդակության մեջ ներառել ՀՀ հանրակրթական բոլոր առարկաները:

Դարձե՛ք մասնակիցն իրական վերափոխման

- **Զինե՛ք հայ սովորողին կրթական ռեսուրսներով.** 1.500.000 դրամը մեկ հնարավորություն կտա ստեղծել «Աշխարհացույցի» մեկ դաս՝ 20+ գիտափաստարկ կրթական հոդվածներով, քարտեզներով, նկարներով, տեսա և աուդիո նյութերով, քուիզներով, որը Երևանից մինչև սահմանապահ գյուղեր սովորողներին կապահովի բարձրորակ ու գրավիչ կրթական բովանդակությամբ:
- **Աջակցե՛ք ՀՀ դպրոցի արդիականացման մեր առաքելությանը.** ցանկացած ներդրում «Աշխարհացույցի» երեք հիմնասյուներում ուղղակի աջակցություն է ՀՀ դպրոցների համակարգային վերափոխմանը:

Պատրա՞ստ եք աջակցել ՀՀ դպրոցների հզորացման գործին:

Գրե՛ք մեզ կամ վանգահարե՛ք donation@visualarmenia.org +374 41 500 608

Ծանոթացե՛ք «Վիզուալ Հայաստանի» 2021-2024 թթ. հաշվետվությանը	Նվիրաբերե՛ք այստեղ	Հետևե՛ք մեզ Facebook-ում

Ուսուցիչների հզորացում

Զինելով վերափոխման իրական ջահակիրներին

Մենք հավատացած ենք, որ կրթական համակարգն այնքանով է արդյունավետ, որքանով այն ապրեցնող ուսուցիչները: Որևէ կրթական բարեփոխում, առավել ևս՝ նորարարություն, չի կարող հաջողել, եթե ուսուցիչները ներգրավված, պատրաստված ու պատրաստակամ չեն այն կյանքի կոչել: Այս հավատը համոզմունք դարձավ 200-ից ավելի ՀՀ դպրոցներ կատարած մեր այցերի ընթացքում:

Ուսուցիչների հետ առաջին իսկ շփումները վկայեցին, որ նրանց այլևս հարկավոր չեն տեսական ուղղորդումներ կամ չափորոշիչներ, այլ անհրաժեշտ են պրակտիկ գործիքներ, հմտություններ ու միջավայր ժամանակակից կրթություն տալու համար: Նախ՝ լսեցինք, ապա՝ հարմարվեցինք, հետո՝ կառուցեցինք դասասենյակային կարիքները հասցեագրող ուսուցիչների հզորացման այնպիսի ծրագրեր, որտեղ ուսուցիչները նորարարության կրողն ու տարածման շարժիչ ուժերն են:

Ուսուցիչների հզորացման մեր հիմնական ծրագրերն են՝



- **Եռամսյա վերապատրաստում.** մասնակիցները ծանոթանում են մանկավարժական առաջատար մոտեցումներին, ուսումնասիրում մեթոդներն ու հնարները, անհրաժեշտ ՏՀՏ գործիքները, հոկում դասի պլանավորման, մատուցման հմտությունները 21-րդ դարի ուսումնառության պահանջները բավարարելու համար: Մինչև 2025 թ. Ծրագրին մասնակցել է 1.000-ից ավելի ուսուցիչ: 2025 թ. Ծրագրին դիմել է 1.182 ուսուցիչ:

- **«Ուսուցչի մենթորության կրթաթոշակ».** նպատակն է ստեղծել մենթորական հմտություններով ու գործիքակազմով վինված, մասնագիտական փորձն ու ոգեշնչումը գործընկերներին փոխանցելու կարողություն ունեցող առաջնորդ-ուսուցիչներ: Ծրագիրը ուսուցիչներին առաջարկում է 6-ամսյա կրթաթոշակ (ծախսերը հոգալու համար) և խորացված գործնական վերապատրաստում: Ծրագրի շրջանավարտ 53 ուսուցիչներն արդեն իրենց գիտելիքն ու փորձն են փոխանցել Հայաստանի 2.000-ից ավելի ուսուցիչների: ԿԶՆԱԿ հիմնադրամի փորձագիտական եզրակացությամբ Ծրագիրը որակվել է որպես «համապարփակ և կարևոր»:

- **Հավաստագրված պարտադիր վերապատրաստումներ.** 2024 թ. օգոստոսին «Վիկուալ Հայաստանը» ՀՀ ԿԳՄՍՆ կողմից երաշխավորվեց որպես ուսուցիչների հերթական (պարտադիր) վերապատրաստում իրականացնող կառույց: Ընդամենը մեկ տարում մենք 883 ժամ վերապատրաստում ենք իրականացրել տարբեր առարկաներ դասավանդող 527 ուսուցչի համար:

- **Մարզային սեմինաներ.** «Աշխարհացույցի» ճանաչման և գործածման մեկօրյա աշխատարանները 2022 թ. ի վեր դարձել են մեր գործունեության կենարար մասնիկը. դրանք մեկ համար 1.000-ից ավելի ուսուցիչների ուշադիր լսելու, խնդիրներն ու հնարավորությունները տեղում ճանաչելու, մարզերի յուրահատկությունները զգալու, հասցեական լուծումներ մշակելու ու վստահություն կառուցելու կարևոր աղբյուր են:



«Վերապատրաստումները նոր մեկնարկ էին իմ մասնագիտական ճանապարհին: Դրանք տվեցին ինձ այն ամենը, ինչի կարիքը երկար տարիներ զգացել եմ որպես ուսուցիչ»:

Սվետլանա Սահակյան, Չարենցավանի թիվ 2 հիմնական դպրոցի պատմության ուսուցիչ, Կոտայքի մարզ:

«Սա հեղափոխություն է մեր կյանքում: Երեք տարի առաջ մեզ ներկայացրին նոր պետական չափորոշիչը՝ առանց բացատրությունների ու ռեսուրսների: Սակայն միայն հիմա՝ «Աշխարհացույցի» շնորհիվ է, որ դրանք դառնում են դասարանում կիրառելի»:

Զավահիր Բաղալյան, Մովսես գյուղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ, Տավուշի մարզ:

Մեր նպատակն է առաջիկա 3-5 տարիների ընթացքում խորքային մասնագիտական վերապատրաստումներ և մենթորական աջակցություն ցույց տալ ավելի քան 5.000 հայ ուսուցչի և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում:

Դարձե՛ք մասնակիցն իրական վերափոխման

- **Զինե՛ք ուսուցչին.** 1.500.000 դրամը մեկ հնարավորություն կտա մեկ եռամսյա վերապատրաստում իրականացնել 30+ ուսուցիչների համար՝ նրանց վինելով ժամանակակից դասավանդման հմտություններով, գործիքներով և վստահությամբ:

- **Աջակցե՛ք ՀՀ դպրոցի արդիականացման մեր առաքելությանը.** ցանկացած ներդրում «Աշխարհացույցի» երեք հիմնասյուներում ուղղակի աջակցություն է ՀՀ դպրոցների համակարգային վերափոխմանը:

Պատրա՞ստ եք աջակցել ՀՀ դպրոցների հզորացման գործին:

Գրե՛ք մեզ կամ վանգահարե՛ք donation@visualarmenia.org +374 41 500 608

Ծանոթացե՛ք «Վիզուալ Հայաստանի» 2021-2024 թթ. հաշվետվությանը

Նվիրաբերե՛ք այստեղ

Հետևե՛ք մեզ Facebook-ում

Դպրոցների տեխնիկական վերակինում

Թռիչքային վարգացումը Հայաստանի դպրոցներում արդեն սկսված է

Դպրոցների տեխնիկական վերակինման ուղղությունը բնականորեն ձևավորվեց «Բրեյնոգրաֆ» հարթակը դպրոցներում ներդնելիս, որպեսզի նվավեցնենք կրթական տեխնիկայի սուր կարիքը: Ստեղծվեց «Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին» մրցույթը, որը լիակատար հավասար հնարավորություններ է տալիս բոլոր դպրոցներին նախագծային աշխատանք կատարելու միջոցով վաստակել ժամանակի լավագույն ուսումնաօժանդակ տեխնիկա: Այն խթանում է ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ստեղծարար, վերլուծական միտքը՝ երաշխավորելով, որ տեխնիկան ոչ թե պասիվ հավելում, այլ կրթական վարգացման իրական խթան կդառնա:

Մեր ձեռքբերումները

- Ընդամենը երկու տարում ՀՀ բոլոր մարզերի 147 դպրոց՝ ընդհանուր դպրոցների 11%-ը, մենք վինել ենք նորագույն սմարթ-էկրաններով:
- 2023, 2024 և 2025 թվականներին «Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին» մրցույթ-ծրագիրը ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է բարեգործական՝ ստանալով հարկային արտոնություն:
- «Վիկուալ Հայաստան» հիմնադրամի «Նախագծային կրթության մոդուլը» դարձել է առաջին հավաստագրված ծրագիրը, 2025 թ.
- Մենք վերափոխել ենք հարյուրավոր ուսուցիչների, հապարավոր աշակերտների կրթական առօրյան՝ այն դարձնելով արժանապատիվ 21-րդ դարում կրթության համար:

«Գիտեք՝ երբ եմ դասս հաջողված համարում: Երբ զգում եմ, որ աշակերտներիս բոլոր զգայարաններն ակտիվ են, երբ աշակերտներս դասասենյակը լքում են ժպիտը դեմքներին: Հիմա՝ սմարթով աշակերտներս դարձել են հետազոտողներ: Անգամ նրանք, որոնք նստած են վերջում, ակամայից ներգրավվում են: Ոգևորությունն ակնհայտ է»:

Ռոզա Սուչյան, Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի, Գեղարքունիքի մարզ

147 դպրոց
վինված սմարթ-էկրանով



Ավելին քան տեխնիկա...

Ժամանակակից դասարաններում կրթաօժանդակ տեխնիկան ավելին է, քան պարզապես միջոց: Այն մեր ժամանակների թուղթն ու գրիչն է, որի միջոցով սովորողն ուսումնասիրում ու հասկանում է աշխարհը: Այսօրվա սովորողի գլխավոր կբաղմունքը հեռախոսն է, իսկ երբ դասարանում մեծ «կրթական հեռախոս» կա, սովորողները կենտրոնանում են, ներգրավվում, իսկ դասարանները դառնում են դինամիկ կրթական միջավայրեր:

Համադրելով տեխնիկան դասավանդման առաջատար մեթոդների հետ՝ մենք վերափոխում ենք դասարանը թե՛ տարածական, թե՛ մանկավարժական առումներով. նստարանների քարացած շարքերն իրենց տեղն են կիջում դինամիկ միջավայրին, որտեղ սովորողները կարող են հավաքվել համագործակցային սեղանների շուրջ:

Մեր նպատակն է ՀՀ հանրակրթական 1.399 դպրոցներից յուրաքանչյուրին վինել առնվավն մեկ սմարթ-էկրանով՝ յուրաքանչյուրին ապահովելով արժանապատիվ կրթական հնարավորություններ: Մենք ունենք տեխնիկայի հատուկ բանակցված բարեգործական գնարժեք, իսկ Ծրագիրը հարկապատված է, ինչը մաքսիմալ բարձրացնում է Ծրագրի ծախսարդյունավետությունը:

Դարձե՛ք մասնակիցն իրական վերափոխման

- **Ձինե՛ք մեկ դպրոց մեկ սմարթ-էկրանով.** 1.000.000 դրամը մեկ հնարավորություն կտա ևս մեկ ՀՀ դպրոց վինել մեկ սմարթ-էկրանով, որը միանգամից վերափոխում է թե՛ դասավանդման որակը, թե՛ դպրոցի պատկերացումներն արդի կրթության մասին:
- **Աջակցե՛ք ՀՀ դպրոցի արդիականացման մեր առաքելությանը.** ցանկացած ներդրում «Աշխարհացույցի» երեք հիմնասյուներում ուղղակի աջակցություն է ՀՀ դպրոցների համակարգային վերափոխմանը:

Պատրա՞ստ եք աջակցել ՀՀ դպրոցների հզորացման գործին:

Գրե՛ք մեզ կամ զանգահարե՛ք donation@visualarmenia.org +374 41 500 608

Ծանոթացե՛ք «Վիզուալ Հայաստանի» 2021-2024 թթ. հաշվետվությանը

Նվիրաբերե՛ք այստեղ

Հետևե՛ք մեզ Facebook-ում